

ՀԱՄԱՀԴԻԱՅԻՆ ՆԾԽԱՄԵԺԱՄ ՄԸՅԵՐ ԸԹՈՌՈ Ս. ԻԶՄԻԾՃԱՆԻ

«Աստուածակառոյց եւ անյաղ-
քեի Մեծի Արառոյս անշարժու-
թիւն և անսաստութիւն».

(Հայրապետական մտղանից)

Հայոց ամենահին և ամենանպլիրական
սրբառվայր ս. էջմիածնի Մայր-Ճաճարը
չիմնարկել է ս. Գրիգոր Լուսավորիչը
Տրդատ թագավորի համարործակցությամբ
303 թվին։ Նորադարձ երկրի նպիսկոպո-
սապես դառնալու համար նա մեծ հանդե-
սով ուղելվորից կապագովկիայի կեսարիա
քաղաքը տեղական արքեպիսկոպոսից հոգե-
վոր կոչում ընդունելու։ Զեռնադրվելուց
հետո նույն չքով վերադարձավ Հայաստան
և թագավորանիստ Վաղարշապատ քաղա-
քում իր իսկ հիմնարկած կաթողիկե Մայր
եկեղեցում հաստատեց հայրապետական
դահը, հանդիսանալով այսպիսով առաջին
հայրապետ և կաթողիկոս Հայստանյաց
եկեղեցու։ Մտահոգված լինելով քրիստո-
նեական կրոնի սկզբունքներն արմատավո-
րելու ժողովրդի մէջ, նա հաճախ այցի էր
դուրս գալիս իր հոտին և կենդանի քարո-
զությամբ ու անձնական օրինակով բացա-
տրում և պարզաբանում նոր կրոնի առավե-
լությունները հնի հեթանոսականի նկատ-
մամբ։ Նույն ճանապարհը բանեցին նաև
նրա անմիջական հաջորդները, որոնցից ու-
մանք երեքն ստիպված էին ընդհարվել
նույնիսկ Արշակունի թագավորների ու նա-
խարարների հետ, հանդիմանելով նրանց
հակաքրիստոնեական արարքների համար և
հորդորելով ավետարարանական սկզբու-
թիւնը իր արմատներ էր տարածել հայ
ժողովրդի բոլոր խավերի մեջ, այնպես որ
եկեղեցու նվիրապետության մասին նա
պարզ ու ճիշտ ըմբռնում ուներ, այս պայ-
մաններում պահանջ առաջացավ հայ եկե-
ղեցին անկախ դարձնելու։ Ներսես Մեծը
վերջին կաթողիկոսն էր որ իր ձեռնադրու-
թյունը ստացավ կեսարիայում։ Եթե այն
ժամանակվա քրիստոնյա աշխարհի վեց
պատրիարքական աթոռներից չորսը՝ Ան-
տիոքը, Ալեքսանդրիան, Հոռոմը և Եփեսո-
սը իրենց հեղինակությունը հիմնում էին
չորս ավետարանիչների վրա, հինգերորդը՝
կ. Պոլսինը, Հովհաննես ավետարանչի՝
այնտեղ փոխադրված նշխարների վրա, իսկ
վեցերորդը՝ Երուսաղեմինը, Հիսուսի այն-
տեղ անցկացրած երկրավոր կյանքի հետ
կարլած սրբազն վայրերի վրա, ինչո՞ւ,
ուրեմն, չունենալ առանձին ինքնիշխան
պատրիարքական աթոռ նաև Հայաստա-
նում, որտեղ քրիստոնեության սկիզբը
դրել էին Թաղեռու և Բարդուղիմեռու առա-
քյաները ու այն հետագայում տարածել և
համաժողովրդական կրոն էր դարձրել ա-
ռաքելաշալիղ, կենդանի նահատակ և Գրի-
գոր Լուսավորիչը։ Այս նպատակով 366
թվին Վաղարշապատում մի ժողով է դու-
մարվում մարմնավոր ու հեգեռ իշխանու-

Ավելի քան կես դար էր անցել քրիստո-
նեության մուտքից։ Երբ Հայրապետական
դահը վրա բազմեց Ներսես Մեծը։ Այդքան
ժամանակվա ընթացքում քրիստոնեու-
թյունը խոր արմատներ էր տարածել հայ
ժողովրդի բոլոր խավերի մեջ, այնպես որ
եկեղեցու նվիրապետության մասին նա
պարզ ու ճիշտ ըմբռնում ուներ, այս պայ-
մաններում պահանջ առաջացավ հայ եկե-
ղեցին անկախ դարձնելու։ Ներսես Մեծը
վերջին կաթողիկոսն էր որ իր ձեռնադրու-
թյունը ստացավ կեսարիայում։ Եթե այն
ժամանակվա քրիստոնյա աշխարհի վեց
պատրիարքական աթոռներից չորսը՝ Ան-
տիոքը, Ալեքսանդրիան, Հոռոմը և Եփեսո-
սը իրենց հեղինակությունը հիմնում էին
չորս ավետարանիչների վրա, հինգերորդը՝
կ. Պոլսինը, Հովհաննես ավետարանչի՝
այնտեղ փոխադրված նշխարների վրա, իսկ
վեցերորդը՝ Երուսաղեմինը, Հիսուսի այն-
տեղ անցկացրած երկրավոր կյանքի հետ
կարլած սրբազն վայրերի վրա, ինչո՞ւ,
ուրեմն, չունենալ առանձին ինքնիշխան
պատրիարքական աթոռ նաև Հայաստա-
նում, որտեղ քրիստոնեության սկիզբը
դրել էին Թաղեռու և Բարդուղիմեռու առա-
քյաները ու այն հետագայում տարածել և
համաժողովրդական կրոն էր դարձրել ա-
ռաքելաշալիղ, կենդանի նահատակ և Գրի-
գոր Լուսավորիչը։ Այս նպատակով 366
թվին Վաղարշապատում մի ժողով է դու-
մարվում մարմնավոր ու հեգեռ իշխանու-

թյունների ներկայացուցիչների համատեղ մասնակցությամբ, որտեղ որոշում են կաթողիկոսական ձևանադրության համար ընտրյալին այլևս կեսարիա չուղարկել, այլ տեղում, վազարչապատռում, կաթողիկե Մայր Եկեղեցում օծել հայ եպիսկոպոսների ձեռքով: Այն օրվանից սկսած, հենված Հայաստանի առաջին լրաւալորիչների և երկրորդ լուսավորչի պատկանելի հեղինակության վրա, հայ Եկեղեցին ինքնուրույն է դառնաւմ:

Այս շրջանում մինչեւ 428 թիվը, մինչեւ Արշակունյաց թաղավորության բարձումը, քաղաքական դժնզակ և հեղհեղուկ հանգամանքներում կաթողիկոսական աթոռի դաշտակալները մերթ Բյուզանդիան էին դիմում Հայուննի իշխանությունը պահպանելու համար այսեղից օդուություն ստանալու հուսով, մերթ Տիգրոս զեթ Հայաստանի պարսից բաժնում սեփական պետության խախուս հիմքերն ամբագնդելու մտապրությամբ։ Միևնույն ժամանակ բաղմանյա փորձից ելնելով՝ հոսեսես տրամադրությած թե արևմտյան և թե արեվիլյան հարեաններից ունեցած ակնկարությունների նկատմամբ նրանք որոնում էին մի զորավոր զենք գտնել Հայ ժողովրդի պահպանության համար որով նաևցած ակնկարություններու, և իր ինքնուրույն զոյությունը պահպանելու դարերի հործանքի դեմ։ Եվ աշա երկունքն իր սքանչելի պառուղը տվեց առեղծանիվ Հայուննի թշխանությունից, բայց միշտ տենչացանք Հարմար պահին այն նորից վերականգնելու, և իր ինքնուրույն զոյությունը պահպանելու դարերի հործանքի դեմ։ Եվ աշա երկունքն իր սքանչելի պառուղը տվեց առեղծանիվ Հայ գերբը, թարգմանվեցին Աստվածաշունչը և բազմաթիվ ուրիշ գրքեր, հանդես եկան ինքնուրույն Հայ հեղինակներ, ազգային գրականությունն սկսեց ծաղկել և այսպիսով Հայ ժողովուրդը հագելվոր, կուլտուրական կյանքում անկախացանք, միանգամ ընդմիշտ կապվեց այն ժամանակավա կրթված արևմուռքի հետ։ Ապրելով արեւելքում, նա միշտ իր կապերը կենդանի էր պահում արևմուռքի հետ։

վերցնելով նրանից այն ամենը, ինչ օկտագուած էր համարում իր համար։
Եթե Արշակունյաց ըրջանում Հայաստանի պատրիարքական Աթոռի գահակալունը կրկնակի մատահրդությամբ էին սրբանողված մի կողմից՝ սեփական քաղաքական իշխանության պահպանման համար մեկ Արքաց, մեկ Բյուզանդիտոնի արքունիքի գոնուրը բաղնիկու, մյուս կողմից՝ երկրի ներսում քրիստոնեական կրոնի հիմունքներն ամբազնուելու, ապա այդ թագավորության բարձումից հետո նրանց պաշտոնների առնելի ծանրացավ։ Հայ եկեղեցին զըրկվեց իր ամենահզոր նեցուկից՝ հայ թագավորից և այսպիսառ Հոգիվոր պետը, եկեղեցու զլուխը մենակ մնաց երկու հզոր հարեւանների։ Հարաւոնի ոտնձգությունների հանդեպ, որոնք ուղղված էին հայ ժողովրդի անկախության, ինքնուրույն զոյտության դեմ։ Հինդերորդ դարի ուղիղ կեսին այնքան սպասնալից էր Պարսկաստանից եկող հարվածը, որ միայն սորզովին կազմակերպված ապատամբությունը կարող էր հետ դարձնել, վանել այդ վտանգը։ Եղաւ Ամարայրի դաշտում Վարդանանց մըզած պատերազմում զորավիրու են հանդիսաւում և իրենց կենդանի օրինակով հայրենիքի ու եկեղեցու համար ի սպաս են զնում իրենց անձը հայ Հոգեվորականության լավագույն ներկայացուցիչները՝ Ղեցոնդ երեցը, Հովսեփ կաթողիկոսը և ուրիշները, որոնք հետո բռնավոր Հաղկերտի հրամանում նաև նահատակիւում են։

Վերցնելով Հայկական թագավորությունը Պարսկաստանն սկսեց մեր երկիրը կառավարել մարզպանների ձեռքով, որոնք նաև կառավարել էին Դվինում։ Հայ կաթողիկոսները ստիպված եղան հայրապետական գահը Վաղարշապատից փոխադրել Դվին 484 թ., ըստ ոմանց մի քիչ ավելի շուտ, քանի որ ի պաշտօնե լինելով Հայ ժողովրդի հոգեմարդության մեջ էին երկրի ողբակաւարների հետ։

Մարզպանական շրջանում, որ շարունակվեց մինչև 7-րդ դարի 40 թիվը, մինչև արքարական արշավանքների սկիզբը. Հայ

the more difficult it is to
imagine it being
done, as such
as may be seen in
addition, and
such as are
not done
in any single
way, or
in any
one
way.



ՎԵՀԱՐԱՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻՑ

և կեղեցու պետերը զբաղվեցին մի շատ կարելոր գործով՝ հայ եկեղեցու աղքայնացման գործով։ Եթե 4-րդ դարի երկրորդ կեսում Ներսես Մհերի օրով նա անկախացավ, առաջ հաղիով մի դար անցած նա աղքայնացավ, դարձավ աղքային հայ եկեղեցի։ Մինչև Վարդանանց պատերազմը հայ եկեղեցին դավանաբանորեն մի էր հումն եկեղեցու հետ, նրա հետ ընդունելով և դավանելով տիեզերական Յժողովների բոլոր որոշումներն ու դավանամբը։ Բայց 451 թվից սկսվում է հայ եկեղեցու ինքնուրույն զարդացումը։ Հայտնի է, որ այդ թվականին հայ ժողովուրդը, միացած իր հոգևորականության հետ, կենաց և մահու կոխի էր մզում Սասանյան հզոր Պարսկաստանի գեմ և այդ պատերազմում, ինչպես և նրան հաջորդառ պատերազմներում, հայ ժողովուրդը վերջիկերծու հաղթող դուրս եկավ, իր դավանած սկզբունքները պաշտպանելով։

Հայ եկեղեցու աղաստ բարգավաճմանը և զարդացմանը վերջ են դնում արարտական արշավանքները։ Ինչպես մի մըրբիկ Արարտիայի անասպատից Միջազեաքի վրայով 640 թվին Հայաստան են ներխուժում նոր կրոնի՝ Խոլամի քարոզիչները, որոնք ամենուռեք ամեր, մահ, կոտորած են տարածում և մեր ծաղկած երկիրը անսպատի, ողբի ու լացի վայրի վերածում։ Այնքան ավերիչ էր հարլածը, այնքան անդթություններ էին գործել արարտիները, որ երբ ժամանակվորապես նրանց քաշվելուց հետո Ներսես Տայեցի եպիսկոպոսին (Հետադայում կաթողիկոս Ներսես Գ. Շինող անվամբ) կաթողիկոս են ընտրում, նա դարձուրած իր տեսած այդ բոլոր դադանություններից, սկզբում բացերաց հրաժարեց այդ վեհ աստիճանից։ Արարտիք նորից եկան և հետզհետե, թեկուր հանդիպելով հայ ժողովրդի կաղմակերպած ուժեղ դիմադրության՝ նվաճեցին մեր երկիրը։ Սասանյան Պարսկաստանն ընդհարման առաջին խակ պահին հողմացրիվ եղավ։ Մարզպաններին քչելով Հայաստանից նրանք իրենց կողմից մարզպանական Դմինում

դրին իրենց կառավարիչներին, որոնց մեր պատմագիրները ոստիկան են անվանում։ Կաթողիկոսական Աթոռն ևս չարունակեց մնալ Դմինում։

Արարտիք մոտ երկու ու կես դար իշխուցին մեր երկրում։ Եթե Սասանյանների ժամանակ հայ եկեղեցու պետերը ստիպված էին լինում արևելք՝ Տիգրոն գնալ իրենց հավատացյալ ժողովրդի անտանելի վիճակը թեթևացնելու նպաստակով, ապա արարտիների շրջանում նրանք կամա-ակամա երեսները զարձրին դեպի հարավ, զեպի Դամակակոս ու Բաղդատ, որտեղ նստում էին նոր աշխարհակալ բոնակաները։ Որքան մարտիրոսներ, նահատակներ ենք տվել այդ շրջանում։ Արարտիների ժամանակ հայկական թաղավորությունը վաղուց վերացված էր, բայց մնում էին նախարարական, իշխանական տները, որոնք առաջնորդում էին ժողովրդին և հոգեվոր իշխանության հետ միասին նրան պաշտպան հանդիսանում։ Արարտիք այդ էլ շատ համարեցին և ահա 707 թվին Կաշմ ոստիկանը խարեւությամբ Նախիճնավանի հայ եկեղեցում հայտաբերվու 700 հայ նախարար, նրանց բոլորին այսում է, ժողովրդին թողնելուց անդյունի, անտեր։ Նրանց տիրապետության շրջանի կաթողիկոսների կյանքը մի տանջանք էր, բայց հանուն հայ ժողովրդի փրկության, լավագույն ապահովի ակնկարության հուսով, նրանք համբերությամբ տանում էին իրենց բաժին ընկած բոլոր նեղությունները։

Արարների ձեռքից կրած մեծ տառապանքներից հետո հայ ժողովրդի համար շնորհիվ իր ցուցաբերած զարմանալի տոկունության զալիս են համեմատարար ավելի երջանիկ օրեր։ Դրդ դարի երկրորդ կեսից արարտիների հիմնած պետությունը, խալիֆայությունը, դեպի անկում է դիմում։ Այդ բանից Հայաստանում օգտրվում են արգեն բավականին զորացած Բաղրատունի իշխանները, որոնցից մեկը, Աշոտ Բաղրատունին դառնում է Հայաստանի թագավոր։ Հայ ժողովուրդը, հայ եկեղեցին հանձին նորողած հայրենի սեփական թա-

գալվորական իշխանության դատնում են իրենց
ամենաջերմ պաշտպանին և սրտանց փար-
վում նրան հարատե դարձնելու համար
այն : Հետազայում Բագրատունի Ազոտ Եր-
կաթի օրով արաբները կարծ ժամանակով
գրավում են Դմիտրի կաթողիկոսարանը և
նրա գահակալ Հովհաննես Դրասիանա-
կերտցին 924 թվին ժամանակամորապես
Մայր-Աթոռը փոխադրում է Վասպուրա-
կան : Նրա հաջորդների օրով հայրապետա-
կան գահը նորից փոխադրվում է Հյուսիս՝
Արքինա, Անիի մոտ, իսկ 933 թվին, Անի,
որտեղ նատում էին Բագրատունի թագա-
լուրները : Դա Բագրատունյաց ամենածագ-
լիալ շրջանն էր, երբ արտաքին թշնամի-
ներից պաշտպանված հայ ժողովուրդը խա-
ղաղություն էր վայելում, ալիքոված իր շի-
նարար աշխատանքին : «Հապար ու մի՛ եկե՛
դեցի ունեցող Անին իր միջնաբերդով, ար-
քայական պալատով ամուր պարիսպներով,
ստորերկրյա անցքերով ու թագստոցներով
և ուրիշ բազմաթիվ շինություններով ա-
րևմտյան Ասիայի ամենամեծ ու ամենավա-
ճառաշահ քաղաքներից մեկն . էր դարձել:
Խաղաղովթյան բարիքները վայելելով ծաղ-
կում են դիտության այն պահու բժուր ճյու-
ղերը : Նույն անդորրությունն էր վայելում
Հարության հարեւան Արծրունյաց թագա-
լուրությունը, որտեղ այդ ժամանակ ծաղ-
կում էր մեր անցյալի ամենամեծ անձնա-
վորություններից մեկը՝ Գրիգոր Նարեկա-
ցին, որ իր Նարեկով պատկառելի տեղ է
դրահում մեր հին գրականության մեջ :

Բայց Հայաստանին վիճակված չէր երկար վայելել իր ըղձալի խաղաղությունը։ Ինչպես արարացիք յոթերորդ դարի առաջին կեսում ընդհանուր մեր կուլտուրական շինարարությունը կյանքի բոլոր բնադրավաններում, այսպես էլ 11-րդ դարի առաջին քառորդի վերջերին վայրենարարությունը կանգնեցրին մեր ժողովրդի կուլտուրական առաջնաշաղությունը, հողու մոխիր դարձնելով մեր ծաղկած քաղաքներն ու գյուղերը, կողոպտելով դարերի ընթացքում կուտակած հարուստ վանքերի ու եկեղեցիների ճոխ ու մեծադիրի զանաձերությունը։

ու զարդարանքները։ Բաղրատունյաց զահն արդեն սկսել էր երերալ։ Այդ նույն ժամանակում արևմուտքից պակաս հարվածներ չեք, հասցնում «քրիստոնյա» Բյուզանդիան։ Փոխանակ օգնելու Հայաստանին նոր երեվեցած թշնամու գրոհին հակածարված տալու, —թեկուզ իր իսկ շահերի համար, որովհետեւ իրրև պատվար ծառայող հայկան, իշխանության բարձումից հետո արելիլքից եկող խուժամուժ հորդաների հարձակումներն այնուհետև անմիջականութեն իր զեմ պետք է ուղղվեին, —Բյուզանդիան ախտրժակ էր ցուցաբերում Բաղրատունյաց մայրաքաղաք Անին իր շրջակայքով զավթելու. և կուրացած աղանությունից, նա կորցրեց թե իր դաշնակից Բաղրատունիներին, և թե այն բռլոր երկրները, որոնց վրա իշխում էին նրանք, բայց որոնց վրա աչք ուներ ինքը՝ Բյուզանդիան։ Շնորհիլ իր անհեռատես քաղաքականության նա զրկվեց երկուամբ էլ, այսպիսով ազատ ճանապարհ բանալով. արելիլքից եկող զանազան վայրենարարո ու գաղանարարո ցեղերի առաջ։

Բազրաստունյաց վերջին թագավոր Գառ-
դիկը խարեւությամբ Կ+ Պոլիս է հրավիր-
վում և այստեղից այմա չի վերադառնում :
Այսպիսով վերանում է Բաղրատունյաց
թագավորությունը : Այդ ծանր ժամանակ-
ներում, երբ Անին դադարում է մայրաքա-
ղաք լինելուց, կաթողիկոսական աթոռն էլ
է անշքանում : Ականատես Արիստակես
Լաստիվերցին այսպես է նկարագրում իր
ժամանակի այդ դառն իրականությունը .
«Բոլոր աշխարհս խաղաղության մեջ է,
մենք միայն գերի, կալանավոր, սրտակո-
տոր, տնավեր...» ո՞ւր է թագավորական
աթոռը, «ո՞ւր զորքերի բազմությունը, «ո՞ւր
Հայրապետական մեծ ու հրաշալի աթոռը,
ո՞քան դառն ժամանակի հանդիպեցանք»
(Ա. Զամինյան, Հայոց եկեղ. պատմ. Ա.
մաս, էջ 178) :

Կաթողիկոսական աթոռը նորից տեղա-
հան է լինում, 1063 թվին այն փոխադրուա-
են Անիից նախ՝ Թավրլուր՝ Փոքր Հայք, հե-
տո Մամնուալ, հետո նորից Անի, այնտեղից

դարձյալ դեպի արևմուտք՝ Սև լլառն, հետո Ծովք դղյակ, ապա Հոռմկլա, և այս բոլոր թափառումները 1063—1147 թ. թ. կարծ ժամանակաշրջանում։ Կաթողիկոսական աթոռու բավական երկար ժամանակ՝ 1147—1294 թ. թ. մնում է Հոռմկլայում։ Ի՞նչ են վկայում հայրապետական աթոռի այս հաճախակի փոխադրումները։ Այն, որ Հայաստանի և հայ ժողովրդի գրությունը վերին աստիճանի անտանելի էր գարձել, այնքան անտանելի, որ կաթողիկոսները տեղ ու գտադար, հանգիստ չունեին։ Սելջուկների երեսից փախած ժողովուրդը արևմուտքում՝ Բյուզանդական կայսրության մեջ էր որոնում փոքրիչատէ անդորրություն, հանգստություն։ Նույնն էին անում հայոց իշխանական տներից շատերը, որոնք կրիկիիայի Տավրոսի անմատչելի բարձունքներում էին ապաստարան որոնում։ Դրանցից մեկը, Ռուբեն իշխանը, մյուսներից ավելի է գորանում և այսաեղ, Կիլիկիայում 1080 թվին հաստատում է Ռուբենյան հայկական իշխանությունը, որը հետագայում դառնում է Թագավորություն, տեվելով մոտ 300 տարի։

Կաթողիկոսական աթոռու դարձյալ փոխադրվում է : Եզրապետու սուլթանները գրավում են Հռոմեական : Բնդհանրական աթոռը 1294 թվականին փոխադրվում է Սիս, Կիլիկիայի մայրաքաղաքը, որտեղ մնում է մինչև 1441 թիվը : Կաթողիկոսական աթոռու այս թափառումների ժամանակ մոտ 400 տարվա ընթացքում հայ եկեղեցու համար ամենակարևոր ինդիքը միության խնդիրն էր, որ Մյուս եկեղեցիները դնում էին նրա առաջ, այսինքն հայ ազգային անկախի եկեղեցին ենթարկելու հույն կամ կաթոլիկ եկեղեցուն : Հետզետե բուն Հայաստանից՝ Մեծ Հայքից հեռանալով կաթողիկոսական աթոռը իր այս թափառումների ժամանակ ալելի ու ալելի հաճախ էր ըստիվում ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ աշտին, կաթոլիկ երկների հետ : Թաղաքական անբարենպատ հանդամանքներից ըստիվված նրա գահակալները հարկադրված էին կիլիկիայի հայ թաղաքորների հետ

մթապին օգնություն խնդրել արևմուտքից
իրենց անկախությունը պահպանելու հա-
մար, բայց Հայցված օղնությունը խոս-
տացվում էր միշտ մի պայմանով՝ Հայ եկե-
ղեցին պետք է ձեռք քաշեր իր դարավոր,
բյուրավոր զոհերով Նվաճած ինքնուրուց
նությունից և ենթարկվեր Բյուզանդիայի
կայսրին ու պատրիարքին, եթե օգնության
դիմումը սրանց էր ուղղված, կամ Հռոմի
պապին, կաթոլիկ եկեղեցուն, եթե դիմու-
մը սրան էր ուղղված։ Աւրիշ պայմանով
որևէ օգնություն մերժվում էր։ Սկզբից
և եթ այս երկու եկեղեցիների պետքը հա-
յերից պահանջում էին հոգեվոր ստրկու-
թյուն, որի հետ հաշտվելին անկարելի էր.
Նրանց պահանջած միությունը ոչ թե եր-
կու կողմից արվելիք զիջումների զնով կա-
յանալիք միությունն էր լինելու, այլ ու-
ժեղի կողմից ուժի վրա հիմնված թույլից
պահանջմելիք միություն։

ի՞նչ էր մնում անել այս աստանդական շրջանում հայ եկեղեցու հայրապետներին. նրանցից ունանք կայտնությունը կորցնում էրն, հակամիտություն էին ցույց տալիս արվող պահանջը որոշ չափով բավարարելու, բայց դրա համար նախապես համաձայնության դալով Մայր-Հայրենիքի, Մեծ Հայքի եկեղեցականների հետ ։ Ճիշտ է, Հայաստանում հայրենի իշխանությունը վերացված էր, բայց հայ ժողովուրդն իր սովոր մեծամասնությամբ դեռ այնտեղ էր ապրում: Հայաստանի բնրդերի, ամրոցների մեծ մասը օտար բռնակալների ձեռքին էր, բայց կային այլ տեսակի բնրդեր, մտավոր ու հոգեվոր բնրդեր, որոնք անառիկ էին նրանց համար: Ինչպես Ծրդ դարում Մեծն Սահակ ու Մեսրոպ զինեցին հայ ժողովրդին սեփական գրով, գրականությամբ, հոգեվոր, կուլտուրական կյանքով իր ինքնուրույն գոյությունը պահպանելու, այնպես էլ այդ խառնակ ժամանակաշրջանում նրանց մատնանշած ուղին առանձին ինամքն առարկա դարձավ: Մեծ Հայքում առանձին թափով ծաղկեցին հայոց վանքերը՝ հայկական կուլտուրայի այդ հնագարյան օջախները, որոնցից մի քանի-

որ եթե մի տեղ ավերվում էին, այլ վաշ-
բերում նորից հարություն էին առնում,
եթե մեր աշխարհի հարավն էր ավերվում,
ապա հյուսիսն էր փոխարինում նրան. կուլ-
տուրական օջախը կրկնակի ծաղկում էր
այստեղ, հյուսիսի անշքացմանը նրա տեղը
բանում էր հարավը, այսպես և արեւելքը
փոխարինում էր արևմուտքին, արևմուտքը
արեւելքին, միջնաշխարհը ծայրամասերին
և հակառակը. հայի լուսավոր միտքն ու
հողին մեր հոգեվոր ջահը, կուլտուրական
դանձերը տեղից տեղ էր թուցնում չմարե-
լու, անկորուտտ սրբազնելու համար:
Դրանց սպասարկող անձնազոհ մարդիկ
նույնպես հարատեմ չարժուն վիճակի մեջ
էին միշտ պատրաստ ծառայելու հայկա-
կան ազգային կուլտուրային՝ բոլոր բնա-
դավառներում: Ահա կարծես շուրջպար-
րունած հաջորդում են իրար այդ հնաւա-
րյան վանքերը, եղերելով Հայաստան աշ-
խարհի արևելյան սահմանները՝ Հաղպատն
ու Սանահինը, Գանձատարն ու Տաթելը,
Երնջակն ու Դարաշամբը, Արտավի ո. Թա-
դեոսն ու Աղբակի ո. Բարիդուղիմեոսը: Ա-
պա սրանցից ավելի դեպի Երկրի ներսը
վանքերի մի ուրիշ պար՝ Մարմաշենն ու
Հառիծը, Կեչառիսն ու Սեփանը, Հաղպա-
րծինն ու Գետիկը, Գեղարդը, Խոր Վիրապն ու
Կամրջաձորը, Վանա լճի ամբողջ ըրջակայ-
քը, ծածկված վանքերով, որոնց մեջ Վա-
րագը, Նարեկն ու Մեծոփը, ապա Մշո-
քաշտի ո. Կարապետը և... ո՞ր մեկը հի-
շենք: Սրանք իրենց հայացքն ուղղում են
Արարատյան դաշտին, ո. Գրիգորի հիմնած
Մայր Տաճարին և կուսանաց վկայարաննե-
րին, իսկ բոլորը միասին կարծես եթերա-
յին ալիքներով ազդում հեռավոր արևմուտ-
քում, բնիկ հողից հեռու, պանդխոտության
մեջ գտնվող Մայր-Աթոռի գահակալների
ու նրանց շրջապատողների վրա ներշնչելով
նրանց արիության ոգի, հայտ, կայու-
նություն չդավաճանելու անցյալից բյուրա-
վոր տանջանքներով մեղ հասած հայ եկե-
ղեցու անկախությանը, ինքնուրույնությա-
նը, միշտ մնալով զդաստացնողի, սթափեց-
նողի, անդամ իսկ սանձահարողի դերում

արևմուտքում ապրող մեր հատվածի նկատ-
մամբ: Խնչակո որ Արշակ Բ-ը Շապուհի ա-
ռաջ պարսկական հողի վրա կանգնելով
խեղճանում էր, անդոր դառնում և նվաս-
տանում, իսկ Հայաստանից բերված հողի
վրա կանգնելով ըմբոստանում էր, խրոխ-
տանում և Համարձակորեն խոսում, Հայրե-
նի հողից ստանալով այդ խիզախ ողին,
այնպես էլ արեւելյան հայկական վանքերի
եկեղեցականներից ժամանակավորապես ա-
րևմուտք տեղափոխված կաթողիկոսական
աթոռի գահակալներին ուղղված գրու-
թյունները ույժ: ու կարողություն էին տա-
լիս նրանց հաստատում հենարան գտնելու
և հայի անցյալի կուլտուրայով բնումավոր-
ված ալեծուփ նավը ապահով ու անքույթ
նավահանգիստ հասցնելու:

Թե մեր հոգեվոր հայրերն իրենց մը-
տածելակերպով որքան ավելի բարձր էին
կանգնած եկեղեցիների միության պահանջ-
ներից, բավական է կանգ առնել թեկուզ
միայն ներսես Շնորհալու վրա, որը կաթո-
ղիկոսություն արագ 1166—1173 թ. թ.:
Այս բազմերախա հայրապետը հունաց
Մանվել կայսրին ուղարկած հայոց եկեղե-
ցու դավանության, ծեսերի, ու տոների
վերաբերյալ ընդարձակ դրության մեջ
բացատրելով, թե ինչու հայերը, հեն-
վելով քրիստոնեության իսկական աղբյուր
ամեստարանի վրա, Քրիստոսի ծննդարը
հունվարի 6-ին են կատարում, իսկ Ամե-
ստումը՝ ապրիլի 7-ին, այն ինչ հույները
կատարում են առաջինը դեկտեմբերի 25-ին,
երկրորդը՝ մարտի 25-ին, ավելացնում է.
«Բայց թէ այսպէս և թէ այնպէս ի փառա
Աստուծոյ կատարեսցին», (Թուղթը ընդհան-
րական ներսիս Շնորհալոյ, 1865 թ. էջ
123): Այսինքն էականն այն չէ, թե որ օրն
ես կատարում, այլ, այն որ Աստծուն փա-
ռաբաննելու համար կատարիլի: Նույն տե-
ղում բացատրելով, թե ինչու են հայերը
պատարագը, հաղորդությունը անապա-
կան, մաքուր գինիով կատարում, այն ինչ
հույները պարտադրաբար զինու հետ ջուր
են խառնում, Շնորհալին ավելացնում է.
«Բայց թէ այսպէս և թէ այնպէս, մի-

այն մաքուր հոդենվ պարտ է սպասաւորել աստուածային խորհրդոյն և ամենայնն ի հաճոյան Աստուածոյ կատարեցին, իսկ անմաքուրն և պիղծն թէ անօսական բաժակա առնէ և եթէ չուր արկանելով, բարկացուցանէ զընդունող պատարագին զԱստած փոխանակ Հաշտեցուցանելոյ» (Նույնը, էջ 135—136): Դարձյալ վեհ, աղաս Հայացք ծիսական կողմի մասին էականն այն չէ, թե պատարագի խորհուրդը անօսական վինտով ևս կատարում, թե ջրահանու, այլ այն, թե ինչ հոդով ես եկեղեցու այդ ահեղ խորհուրդը կատարում՝ մատուր, թե պիղծ հոդով:

Այս երերյալ վիճակը շարունակվեց առևմուտքում մինչև Կիլիկիայի Հայկական թագավորության բարձումը 1375 թվին, ունով Մայր-Աթոռի գրությունը Սոսոմ ավելի ևս ծանրացավ: Համատարած բանություն էր տիրում մեր երկրում, թե Մեծ Հայքում, որտեղ Հայ իշխանական վերջին նները Համարյա բոլորովին անհետացել ին, և թե արևմուտքում՝ Կիլիկիայում, բատեղ սուլթաններն իրենց կամայականությունն էին թելագրում խեղճ ու կրակ ժողովրդին: Այս ժամանակ Մեծ Հայքն էլ աւելի ծանր գրության մեջ էր զանվում:

Արևելքում, Սամարդանդում, մի նոր աղանաբարո աշխարհակալ էր Հայտնիել, ենթեմուր անունով: Իր նախնիքների պես ա էլ դեպի արևմուտք արշավեց, ամենուեր տարածելով ավերածություն, մահ, ոտորածի ենթարկելով բնակիչներին, ապացնելով և ոչնչացնելով ամեն ինչ: Նա այսաւան Հասակ 1380 թ., որտեղ որի առնեց խաղաղ բնակչությանը և սկսեց ավերածություններ:

Այս ավերմունքները շարունակեցին և երջացան միայն 1405 թվին, երբ մեռավ ենթեմուրը. Հետո նորից շվոթություն առ ժառանգների միջև: Նոր խոռովույուններ նոր բռնակալների կողմից, ավեածություններ ու անգթություններ Հասաւանում:

Նույնաման սարսափելի գրություն բռմուտքում՝ Կիլիկիայում և Հարավից

հայաբնակ երկրներում տեսնում ենք մինչև 1419 թիվը:

Եվ միթե մեզ Համար հիացմունքի առարկա չէ այն իրողությունը, որ այդ դարհուրելի դարաշրջանում այնուամենայնիվ, զտնվեցին անձնուրաց մարդիկ, որոնք ընդհանուր հայության գոյությունը փրկելու վեհ գաղափարով էին տողորված: Քաղաքական, Հայրենի իշխանությունից դուրկ, օտար բռնակալների ու նրանց վայրենաբարո հրասակախմբերի լծի տակ հեծող ժողովրդի համար այդ դժնղակ ժամանակներում նրանք մի հենարան էին որունում, որով կարողանային միություն հաստատել Մայր-Հայրենիքի հայության ու օտար աշխարհներում ընկած հայության միջև և այդ կապը շարունակ կենդանի պահել: Այդ հենարանը ընդհանրական Մայր-Աթոռուն էր, որ գեռ գտնվում էր հեռավոր Կիլիկիայում: Եվ առա այդ մարդիկ գործի վլուխ անցնելով, անձնամբ ըմբելով կամ գրություններ զերով աշխատում են ընդհանուր հայության հանճարարությամբ, թե հոգեկորականների և թե աշխարհականների միահամուռ ցանկությամբ, Մայր-Աթոռու նորից իր հին նվիրական վայրը՝ Վաղարշապատ, ու էջմիածին փոխադրել: Այդ անձնուրաց գործիքների մեջ ամենա եռանդուրաց Մեծովեցին էր, մի մարմնացյալ եռանդ, մի հերոս անձնավորություն, որի համար դժվարությունները միայն ավելի էին բորբոքում նրա բուռն ցանկությունը անպատճառ: Հաջողացնել Մայր-Աթոռի փոխադրությունը: Եվ Մեծովեցին ու իր դործակիցները հասան իրենց նպատակին: Սկզբում պատմիրակներ ուղարկեցին Սիս' ժամանակի կաթողիկոս Գրիգոր Մուսարեկյանի մոտ, հրավիրելով նրան գալ ու էջմիածին ու բաղմել Լուսավորիչի գահի վրա, բայց նա մերժեց, որից հետո ու էջմիածնում Համազգային մեծ ժողով գումարվեցավ ավելի քան 300 հոգեվորական և աշխարհական անձանց մասնակցությամբ: Ժողովը միաձայն Հավանությամբ կաթողիկոս ընտրեց Կիրակոս Վիրապեցուն, և այդ թվականից 1441-ից

սկսած Մայր-Աթոռը, որ 484 թվից փոխադրվել էր և էջմիածնից—957 տարվա առանձական թափառումներից հետո նորից վերադառնում է իր նախնական ու նվիրական սրբավայրը և այնուհետև այնուհետեղից այլևս չի շարժվում:

Մայր Աթոռը նորից հաստատվում է և էջմիածնում։ Նրա գահակաները ձեռնամուին են լինում անշուք, դարձալու սրբավայրը փոքրիշատե վայելուչ վիճակի մեջ պահել, կառուցում են նորանոր շենքեր, հները նորոգում, աշխատում Մայր-Աթոռը անտեսանդիս ծաղկեցնել և այսպիս մինչև 16-րդ դարի վերջին քառորդը, երբ երկրի քաղաքական դրությունը կրկին դառնում է անտանելի, երբ օտար տիրակալներ ծանր հարկերով և կողովուառվ նեղում են, որ կատարյալ ստրկական վիճակ էր ապրում մեծ ու փոքր իշխանավորների ձեռին։

Ծանր հարկերից զերծ չմնաց նաև Մայր-Աթոռը։ Նրա գահակաները սկսում են նեղվել պետական հարկապահանջներից, որոնց ապօքինությանը չափ ու սահման չըկար։ Բանն այն է, որ պարսից պետության մեջ ամեն ինչ չիմնված էր իշխանավորի կամայականության վրա, իսկ հայերն իրեն քրիստոնյա, կրոնով տարբեր, նրանցից, էլ ավելի էին կողովոտվում, նրանց հետ նաև Մայր-Աթոռը։ Վերջինս իր նկամուաների, դույքի, սեհիականության սերը չէր այսօրվա ունեցածը վաղը հափշտակվում էր, վաղվա ձեռք բերածը՝ մյուս օրը։ Վճարված հարկը նորից էր գանձվում, այն էլ մեծամեծ տոկոսներով, բացի ու օրը։ Կուռ կաշառքների, բնծաների համար։

Ժամանակին այս հարկապահանջությունը այնքան խստացավ, որ կաթողիկոսներն սկսեցին և էջմիածնից խույս տալ, վախչել հարկապահանջների ձեռքը չընկնելու համար։ Այսպես, օրինակ, Դավիթ կաթողիկոսը, նեղվելով հարկապահանջներից, իրեն աթոռակից է ձեռնադրում Մելքիսեդեկ և պիտուապոսին 1593 թվին, պարտքերը վիճամելու ամբողջ ծանրությունը նրա վրա դրցելով։ Մակայն Մելքիսեդեկ կաթողիկոսն էլ չի կարողանում պարտքերի տակից դուրս

դալ։ Պարսից պետական պաշտոնյաների և նրանց պետ Շահ Արասի խստությունն այդ հողի վրա այնպիսի բարբարոսության է հասնում, որ նրանք հանդգնում են քրիստոնյա մի ամբողջ ազգի հոգեւոր պետին ծանր անարգանքի ենթարկել ստիպելով նրան կուլտալ իր իսկ սեփական մարմնից աքցանով կորած մսի կտորը, որից հետո դառն տանջանքների են ենթարկում նրան։ Մելքիսեդեկ և Դավիթի կաթողիկոսները Ամեր բաղաքի առաջնորդ Սրապիոն վարդապետին, որ մեծ հարստության տեր էր, հրավիրում են դալ և էջմիածնին, կաթողիկոսանալ և Մայր Աթոռի պարտքերը վճարել։ Սրապիոնը զալիս է ու կաթողիկոս օծվում 1603 թվին։ Շահ Արասը սրան էլ է չարչարում։ սարսափելի ծեծի է ենթարկում, որից հետո կաթողիկոսը իր ամբողջ հարստությունը նրա բերանը դցելուց հետո միան մի կերպ իր գլուխն աղատում է ու վերագանուում Ամեր, որտեղ շուտով վահճանիում է զանակոծությունից ստացած վերքերից ու հոգեկան տանջանքներից։ Եթե այսպես էր վարվում «Մեծ» կոչվող Շահ Արասը, պետության գլուխը հայոց հոգեւոր ծարրագույն պետի հետ, հազար ի՞նչպես կվարվելին նրա արբանյակները, մեծ ու փոքր բռնակաները խեղճ ու կրակ ժողովրդի հետ, Սահակ Դ։ կաթողիկոսը ուրիշ հնար չի գտնում Մայր Աթոռի պարտատերի ձեռքից ազատվելու, բացի փախչելուց։ Այս գործելակերպը 200 տարի հետո դարձաւ կիրառվեց Մայր Աթոռում։

«Մեծ» կոչվող Շահ Արասը, —հիրավի «մեծ» իր գործած անդթություններով ու բարբարոսություններով, — Հայաստանը, հատկապես Արարատյան դաշտն ու վաճառաշահ Ջուղա քաղաքը հիմնովին քանդեց, հայ ժողովրդին իր գարավոր հայրենիքից տեղահան անելով բռնի գաղթեցրեց Պարսկաստան, Սպահան՝ և նրա ըրջակայքը՝ պարմիկներին վաճառականություն և արհեստներ սովորեցնելու համար։ Այդ բռնակալը, հաւանալով հայ ժողովրդի խորունկ ջերմ կապը ու էջմիածնի Մայր Աթոռի հետ, համարձակվում է մտքով անցակցնել

էջմիածինը քանդել և նրա քարերից նոր ւղայում Սպահանի մոտ մի նոր էջմիածին կառուցել . սակայն իր գիլվային ծրաբը չի կարողանում ի կատար ածել . մին Մայր Տաճարից հանել է տալիս 15 խոր քար և ուղարկում Սպահան : Առաքել մլրիթեցու նշանավոր աշխատությունը միտենական նախատինք է Շահ Արտաշ Նրա կամակատարների տիրահաչակ գործության համար :

Շահ Արտահի մահից հետո Մայր Աթողովությունը փոքր ինչ բարեկավում է հրիվ կաթողիկոսներ Մովսես Սյունեա (1629—1633 թ. թ.) , Փիլիպոս Ազրաւան (1633—1655 թ. թ.) և Հակոբ Զույցու (1655—1680 թ. թ.) համառ աշանքների : Արանք երեքը, որոնք պատթյան մեջ հայոնի են վերանորոգիչ առողջ, Մայր Աթոռոր՝ ու էջմիածինը բարդում պարծառացնում են : Ավելի քան տարի տեսող նրանց գործունեությունը ու բեղմնավոր արդյունքներ է տալիս զաղության ըղձալի պարբաններում : Ար-Աթոռոր կենդանանում է, լցվում միաներով, հաստատվում են դպրոցներ, դպակեարաններ, մեծ թափով առաջ զնում վանքերի շինարարությունը, նությունները : Բարի նախանձով լցված երեք կաթողիկոսները կարծես թե մըրժ են միջանց հետ իրենց գործունեուն մասին հետորդների մեջ ավելի պայմանական թողնելու : Հակոբ Զույցի մինչև իսկ մարդիկ է ուղարկում Եփատակարկան գործի հետ ծանոթաւու և Ամստերդամ քաղաքում մի շարք զեղական գրքեր է տպագրել տալիս . Հայրենիքն այն ժամանակ գեռ շատ ատրաստ էր այլ նոր գործն իր ծոցն ունելու և զարգացնելու : Այս բոլորի հրիվ Մայր Աթոռի հմայքը շատ բարձագագացնելու : Հայ Հովում է այլ աշխատանքի աշքում : Հայ Հավայալներն իրենց շերմեռանդ նվերներով ծառ ու չեն էին պահում իրենց հողու ամենանվիրական վայրը :

Բայց խաղաղությունը նորից վրդով է և այս անդամ շատ երկար ժամա-

նակով : Դարձյալ սկսվում են պատերազմներ, կոփիներ, զանազան խաների ապօռատամրություններ իրենց իսկ պետերի գեմ, այս խժգժություններից առաջում է հայ ժողովրդը, որը արօրվում, ոտք տակ է վակում : Մայր Աթոռի գահակալները ստիպված են լինում բանակալների, այդ թվում նաև անմիջական իշխանավորների՝ Երևանի սարդարների պալատի շեմքը մաշել հայ ժողովրդի դրությունը մեղմելու համար : Միևնույն ժամանակ արդեն 17-րդ դարի վերջերին և մասնավանդ 18-րդ դարի առաջին քառորդին նրանք մեծ բավականությամբ դիտում էին մի նոր պետության բարի սատինյայ Թուլաստանի հղորանալը և աստիճանաբար մոտենալը Անդրկովկասի սահմաններին :

Դարերի ընթացքում քաղաքական իշխանությունից զուրկ հայ ժողովությունը իրեն շրջապատող հզոր հարգւանների հանգելով միշտ աշխատել է մի ընդհանուր լեզու զանել իր ինքնուրաւ մությունը պահպանելու համար : Ընդունելով նրանց քաղաքական գերիշխանությունը, նաև կամեցնել է զոնէ Հողով, իր անփական կուլտուրայով աղոտ մնալ . սակայն միշտ հանդիպել է մինամության, հարվածի : Նրա հոգեոր պիտերը մինչ այդ աշխարհի երեք կողմերը ոտի տակ էին տիեզեր ժողովրդի իրավունքներին պաշտպան կանգնելու հուսով, բայց միշտ ապարդյուն :

Իր գոյության հազարամյակների ըլլը չանում հայ ժողովուրդը շփեց արևելքի, հարևմուռքի, հարավի հետ միշտ բարեկամաբար տրամադրված, միշտ խաղաղության ծարավի, բայց միշտ էլ հուսախարված իր լավագույն ակնկալությունների նկատմամբ : Մնում էր աշխարհի մի կողմը ևս, հյուսիսը : Հուսահատական ներկան ստիպում էր հայ ժողովրդին, հայ մելիքներին, բնեկերին և Մայր Աթոռի գահակալներին նոր որոնումներ կատարել իրենց լավագույն ակնկալություններին հասնելու, դաժան իրականությունից դուրս գալու համար : Եվ ահա նրանք իրենց հայացքներն ուղղում են դեպի հյուսիս, դեպի քրիստո-

նյա, հավատակից Ռուսաստանը, որի մոտենալը սրատվ ողջունում են. նրանք ի հեռուստ մարդարեական հոգու աչքով տեսնում են այդ պետության մուտքը Հայաստան և հայ ժողովրդի վերջնական պատարացումը բարբարուների ձեռքից: Ոգեւորված գալիք երջանիկ ապագայով հայ ժողովուրդը իր ներկայացուցիչների միջոցով մկնում է հարաբերության մեջ մանել ուստաց պետության հետ, հայտնել նրան իր ցալիքը, անմիտիքար, հուսահատական վիճակը և օգնություն խնդրել, իր կողմից խոստանալով ամեն տեսակ աջակցություն: Եվ ժողովուրդը չսխարվեց. այդ օգնությունը վերջիվերջո եկավ. ուստի մեծ ժողովուրդը բռնեց իրեն պարզած այդ ձեռքը, ջերմորեն սեղմեց և պատրաստվեց կովկասյան լեռներն անցնել ու Անդրկովկաս մանել:

Մինչև ուստների մուտքն Անդրկովկաս՝ ամբողջ 18-րդ դարը և 19-րդ դարի վերջին քառորդը լի է մեր և հարևան երկրներում մղված քաղմաթիկ մեծ ու փոքր պատերազմներով, կռիվներով, խորլություններով: Պարսկաստանի կենտրոնական իշխանության թուլությունից օգտվելով, ամեն մի իշխող խան, սարդար, ինքնուժում էր համարում իրեն և սիրտն ուղածի չափ կեղեքում ու բռնություններ գործադրում ժողովրդի գլուխն: Այս շրջանի Մայր-Աթոռի դահակալներից յեկը նրեանցի Սիմեոն կաթողիկոսը, շնորհիվ իր եռանդուն դործունեության, Մայր Աթոռը միշտ վայելով վիճակի մեջ էր պահում: Նա վանքը շրջապատեց ամուր և ընդարձակ պարիսպներով, որոնք մինչև այսօր կանդուն են, ուրիշ շատ շենքեր կառուցեց, մինչև իսկ տպարան բաց արեց, արտասահմանից վարպետներ բերել տարով, թղթի գործարան հիմնեց, այդ թղթով իր խակ կառուցած տպարանում մի քանի գիրք տպագրել որպես. այս բոլորը նա կատարեց պարսկական դաժան իրականության մեջ: Սիմեոն կաթողիկոսը հարստացրեց Մայր Աթոռը, բայց պարսիկները դատարկեցին. նույնիսկ տպարանն ու թղթի գործարանը ցըիվ տըլին: 1780 թվին նրա հաջորդ Ղուկաս

կաթողիկոսը նորից ձեռնամուխ եղավ Մայր Աթոռը շենացնելու և իր 20 տարվա կաթողիկոսության ընթացքում ստի կանոննեցրեց այն, բայց 1795 թ. Աղա Մահմետ խանի արշավանքների ժամանակ նրա ամբարածի մեծ մասն ավարի մատնվեց, Մայր Աթոռը թալանվեց և աղքատացավ:

Որ պարսիկ բանակալների՝ Մայր-Աթոռուի և նրա հայրապետների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ ոչ մի փոփոխություն չէր մտել, չնայած Ռուսաստանը իշխում էր Անդրկովկասի գլուխ մասում 19-րդ դարի առաջին քառորդի վերջներին, այլ պարզ երկում է թեկուզ հետեւյալ երկու դեպքից: Առաջինը: Աղելի քան 200 տարի առաջ Մելքիսեդեկի կաթողիկոսին չարչարում, տանջում ու գանակոծում են, ինչպես քիչ առաջ տեսանք: 220 տարի հետո. 1821 թվին, երեանի հուսեյն Ղուլի խան սարդարը մի պարսկական տոն շնորհավորելու համար իր մոտ գնացած եփրեմ կաթողիկոսին, որ ներկայացել էր ուստական ժապավենով, սպառնում է խեղդել տալ, եթե մյուս անդամ էլ այդպես հայտնվի: Երկրորդ գեղաք՝ 200 տարի առաջ Մահակ կաթողիկոսը իշմիածնից փախչում է Վան՝ Մայր Աթոռուի պարտատերերի ձեռքից աղատվելու համար: 200 տարի հետո 1821 թվին եփրեմ կաթողիկոսը փախչում է Շուշի երեանի սարդարի պահանջանած դրամը վճարել չկարողանալու համար:

Պատկերը լրացնում է Խ. Աբովյանի նկարագրությունը պարսկական տիրապետության անկման նախօրյակին... «Բաս թե իմանաք մեր գլուխն ինչ են բերում... էն ժամանակը դուք ձերը կմոռանաք: Ամեն մեկ բնեկ, մեկ խոն սուրբ Աթոռը գալիս, մեզ կրակն ա դնում, էրում, շամփրի պես պտտում: Ոչ հացն ու ջուրն ա նրանց փորը կշտացնում, ոչ պատիվն ու փեշքաշները նրանց աչքը բռնում: Շաբթով նստում են մեղ վրա, ինչ որ ուզում են, տալիս ենք, էլի ուազի չեն լինում: Սարդարն ու Հասան խանը գալիս Հո երկինքը մեր գլուխն փուլ ա գալիս, աշխարքն աշխարքով դիմչում... Քչիցը, քչիցը, ամեն մեկ գալիս չորս, հինգ

Հարիբ մարդ էտելիցն ընկած՝ տուն են թափում, ո՞ւմ առաջը բռնես... Շատ անգամ վանքի զուոը մասնելիս պետք է զառ ոթից, զումաշից, խասից փիանդեղ քած, որ էս անօրենների ուր խերով ըլի, մեկ լսաս մեղ չհասնի, թե չէ ամենիս էլ մեղ կկոտորեն, Փիանդազը Փառաշների փայն ս, դե արի նրանց սիրուը շահի: Էսպես լաղիս են վանքը լցվում: Վեհարան, խեր, ձաղարապատ էլ տեղ չի մնում, որ միջութը կուչ դանք: Հլու սարդարի, խաների փրուը փիշշաներով, փողով ենք առնում կաթողիկոս, եպիսկոպոս գիշեր, ցերեկ լիներով պտիս գալիս: Ամա ինչ որ մեր սեղն միաբանի ու նոքարների գլմին ապալիս, քո դուշմանդ չտեսնի: Փետի, թրի սաջ արած սաղ օրը ուշունց տալով, ծերկով հազար մեկ բան են ուզում... Մեր իմած հացը, էփած կերակուրը, մորթած իսը, ձեռը տված զատը հարամ ա ու համ: Իրանք են ամբարը մատում, մառանը նկնում, գռները կոտրատում ու ինչ սըրաերն ուզում ա, շատ փայը շաղ տալով, տի տակ զցելով... փչացնելով իրանց ձեռվը դուս բերում, ուղածները շինում, ի մեր յախիցը կպչում» («Վէրք Հայաստանի», էջ 119—120, թիֆլիս 1858):

Եվ ահա այսպիսի դառն ու դաժան իպականության մեջ զտնվելով, համազդան Մայր Աթոռը 1827 թվին անցնում է ուսաց ինքնակալների ձեռքը: Իշխանության փոփոխության համար հայ ժողուություն անդնահատելի ծառայություններ առուցեց ուսական զենքին. Ներսես Աշարակցու նման ջերմ հայրենասեր հոգևոր ովկը, Գրիգոր եպիսկոպոս Մանուչարանի նման դյուցազնը մեծապես նպաստեն, ուսական զենքի հաջողությանն Անրկովկասում, Հայաստանում:

Քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներ Մայր Աթոռը և նրա գահակալները, նշպես և հայ ժողովուրդը համեմատարար պահով ու անդորր կյանք վարեցին:

Սակայն անցյալ դարի 80-ական թվաներին շարական կառավարության կարադրությամբ (1884 թ.) փակվեցին Ան-

դըրկովկասի հայ եկեղեցական ծխական դպրոցները, որոնք պահվում էին հայ ժողովուրդի միջոցներով: Դպրոցները նորից բացվեցին միայն 2 տարի հետո և այն էլ շատ ուսամանափակ տարրական ծրագրով:

Նույն տիսուր պատմությունը կրկնվեց 1896 թ. Նիկոլայ 2-րդ կարգագրությամբ:

Մայր Աթոռը 1903 թվին մեծ պատրաստություն էր տեսնում տոնելու հայոց քրիստոնեության դարձի 1600-ամյակը, նշանակելով այդ թվի աշնանը նուե մյուսորդության հանդեսը, որի մասին նախօրոք, 6 ամիս առաջ հայտարարվեց ի գիտություն ի սփյուռք աշխարհի ցրված հայ ժողովրդյան: Յարական կառավարությունը նույն թիվի հունիսին հայոց բոլոր եկեղեցիների, այդ թվում նաև Մայր Աթոռի բոլոր կալվածները, գույքերը, դրամները գրավեց և այդ այն ժամանակ, երբ ուսական կալվածատերերից շատերը տասնյակ հազարավոր դեսյատին հող ունեին, իսկ բոլոր կալվածատերերը միասին նույնքան հող, որչափ բազմամիլիոն ուռւ գյուղացիությունը:

Միայն ուսական առաջին ուեսոլուցիան 1905 թվին ստիպեց ցարական կառավարությանը վերադարձնել բոլոր կարմածները դույքերով ու գրամով հանդերձ, նորից բանալ փակված հայեկեղեցական դպրոցները:

Եվ էլ ինչեր կարող էին պատահել, եթե ուռւ մեծ ժողովուրդը 1917 թվին մեջ տեղից ընդմիշտ չվերացներ ցարերի կառավարությունը և հիմներ մի պետություն կազմված արդային անկախ ուսակությիկաների ազատ միությունից:

Շուտով կլրանա քառորդ դար այն օրից, ինչ Մայր Աթոռը իր անկաշկանդ դոյլությունը պահպանում է սովետական կարգերում:

Մայր Աթոռը պատվավ, անձնազությամբ կատարել է ի վերուստ իր վրա դրված պարտքը հայ ժողովրդի հանդեպ և այժմ հայրենի պետության ստեղծումով թեթևացած պատմությունից իրեն բաժին ընկած դերից՝ իր ամբողջ ուշադրությունը

դարձնում է իր հավատացյալ ժողովրդի կրոնա-բարոյական դաստիարակության վրա: Իր կատարած այս պատկառելի գերի համար է, որ այնքան հարգանք, որդիական սեր ու ակնածություն ենք տածում դեպի նա, թե մենք, հայերն ի զորի վրա ապրող հայերս և թե արտասահմանի, ի սիյուռս աշխարհի ցրված հայերը: Եթե մենք սովետական Հայաստանում և հարեվան սովետական ուսապուրիկաներում ապրող հայերս հարմարություն ունենք ցանկացած ժամանակ այցելել այդ հինավորց սրբավայրը, ապա հազարամյոր կիլոմետրերով հեռու արտասահմանում ապրող հայերը զուրկ են այդ հարմարությունից, և նրանց համար միշտ կարուի, տեսնչանքի առարկա է մնում նա: Մեր թվականությունից վեց դար առաջ, Նարուգողոնոսոր թագավորի ժամանակ, Բարելոն գերի տարված իսրայելի ժողովուրդը, նստած Եփրատի ափին, կարոտով հիշում էր իր հայրենիքը, Երուսաղեմը, Սիոնը, ասելով «Եթէ մոռացայց զքեղ, Երուսաղէմ, մոռաստի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յիշեցից զքեղ, թէ ոչ, նախ նուած զեցից զքեղ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»: (Սաղմոս, ձև. 2): Այդ նույն սերը, կարոտը պատել է այժմ հեռու արտասահմանում ապրող հայերին, որոնք իրենց հայացքը միշտ ուղղում են այստեղ միիթարություն, սիովիանք ստանալու և

իսրայելի ժողովրդի նման ասում: «Եթէ մոռացայց զքեղ էֆմիածին, մոռասցի զիս աջ իմ»: Հիրավի սկիզբն ուրախության ամեն մի պանդուխտ հայի համար: Աշխարհի մեջ շատ ու շատ ուրախություններ կան, բայց հավատացյալ հայի համար, առաջինը, սախամեծարը հայրենիքով ուրախանալու, Մայր Աթոռով ուրախանալու ուրախությունն է: Այդ սիրո, կարոտի, ուրախության արդյունքն է այն ջերմ աշակցությունը, որ ներկայումն ցույց են տալիս մեր արտասահմանյան եղայրները, թե հոգեռական և թե աշխարհական, մեր աշխարհի նենք թշնամու՝ զերմանական զայթիչների վրա հաղթանակ տանելու համար: Եվ երբ մոտ ապագայում Համազդային Մայր Աթոռի կաթողիկոսական թափուր զաւի վրայից կվերցվեն սղո նշանները արժանավոր Հայրապետի համազդային ընտրությամբ, այն ժամանակ հավատացյալ հայ ժողովուրդը, որ ջերմեռանդությամբ աղոթում է մեր ուսապուրիկայի հարատելության համար, ասելով: «Նաև զհանրապետութիւն Հայաստան աշխարհի զորացուցեն և պահպանեցնեցն յամայր ամս ընդ հովանեաւ աջոյ քո ի շինութեան, ի խաղաղութեան և յանսասանութեան», նույն բուռն զգացումով նաև կասի: «Եկայք, շինեցնուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմածագեաց մեղ լոյս ի Հայաստան աշխարհից»:

ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ